

**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ
ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ****«Ամերիաբանկ» ՓԲԸ**

Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն,

Երևան 0015, Վազգեն Սարգսյան 2

Հեռ.՝ (374 10) 56 11 11

Ֆաքս՝ (374 10) 51 31 33

Էլ. հասցե՝ office@ameriabank.am; www.ameriabank.am

Տվյալ տեղեկատվական ամփոփագրում ներկայացվում են կորպորատիվ հաճախորդներին բանկային երաշխիքի տրամադրման պայմանները

Նշված տեղեկություններին կարող եք ծանոթանալ նաև Ամերիաբանկ ՓԲԸ ինտերնետային կայքում՝ www.ameriabank.am:

«Ամերիաբանկ» ՓԲԸ-ն կորպորատիվ հաճախորդներին առաջարկում է բանկային երաշխիքի հետևյալ տեսակները.

- ուղղակի երաշխիքներ
- անուղղակի (հաստատված) երաշխիքներ /այլ բանկի կողմից երաշխիքի թողարկում «Ամերիաբանկ» ՓԲԸ կոնտր-երաշխիքի դիմաց/

Տրամադրվող Երաշխիքների պայմաններն են՝

- Գումարի առավելագույն չափը՝ սահմանափակվում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից սահմանված նորմատիվային դաշտի պահանջներով:
- Ժամկետը՝ պայմանավորված է գործարքի ժամկետով և Հաճախորդի վարկունակությամբ:
- Արժույթը՝ ՀՀ դրամ, Ռուսական Ռուբլի, ԱՄՆ դոլար, Եվրո կամ այլ արժույթներ՝ ըստ պայմանավորվածության:

Բանկային երաշխիքի ապահովվածությունը՝

1. դեպոնացվող դրամական միջոցներ,
2. այլ միջոցներ՝
 - ՊԿՊ, ոսկու ստանդարտացված ձուլակտորներ,
 - հիմնական միջոցներ (անշարժ, շարժական), երաշխիքներ և երաշխավորություններ,
 - դրամական հոսքեր, շրջանառու միջոցներ կամ խառը գրավ:

Երաշխիքի գծով միջոտրդավճարների/կումիսիոն վճարների կետանցման, Երաշխավորի կողմից Բենեֆիցիարին վճարված գումարները չվերադարձնելու դեպք/եր/ում տույժի չափը՝ 0,13 տոկոս, որը հաշվարկվում է ժամկետանց գումար/ներ/ի նկատմամբ, կետանցի յուրաքանչյուր օրվա համար:

**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ
ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

Ուշադրումներով. ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ԿՈՂՄԻՑ ԲԵՆԵՖԻՑԻԱՐԻՆ ՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՄԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԶՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ԴԵՊՔ/ԵՐ/ՈՒՄ ՁԵՐ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԳՐԱՆՑՎԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐՈՒՄ:

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ԵԹԵ ԴՈՒՔ ԶԿԱՏԱՐԵՔ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԵՎ ԲԱՆԿԸ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐԻ ԳՐԱՎԻ ՀԱՇՎԻՆ, ԱՊԱ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԾԱԾԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՐԱՎԸ ԲԱՎԱՐԱՐ ՉԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐՈՒՄԸ ՀՆԱՐԱՎՈՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ՁԵՐ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԻՆ:

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍՏԱՆՁՆՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԿԱՏԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՁԵՐ ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՄԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՈՒՆԱԳԱՆՁՎԵԼ:

Բանկային երաշխիքի տրամադրման վերաբերյալ որոշման կայացումը

Բանկի կողմից Բանկային երաշխիքի հայտը հաստատելու վերաբերյալ վերջնական որոշումը կայացվում է հաճախորդի կողմից պահանջվող փաստաթղթերի ամբողջ փաթեթը Բանկ ներկայացնելուց հետո առավելագույնը 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

Բանկային երաշխիքը հաճախորդին տրամադրվում է Բանկի որոշմամբ նախատեսված ապահովման պայմանագրերը կնքված լինելու դեպքում: Ընդ որում գույքի գրավադրման դեպքում բանկային երաշխիքը հաճախորդին տրամադրվում է գրավի պայմանագրերը Բանկի համար ընդունելի ձևով ձևակերպելուց և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքելուց, գրավի առարկաները Բանկի պահանջով վերջինիս հետ համագործակցող ապահովագրական ընկերության միջոցով ապահովագրելուց, ինչպես նաև բանկային երաշխիքի տրամադրման այլ պայմանները հաճախորդի կողմից կատարվելուց հետո:

Երաշխիքի տրամադրումը Բանկի կողմից կարող է մերժվել, եթե բանկի սուբյեկտիվ գնահատականով երաշխիքի համար դիմող անձը չի տիրապետում իր պարտավորությունները կատարելու համար բավարար ռեսուրսների:

Բանկային երաշխիքի թողարկման վճարի հաշվարկման կարգը

Բանկային երաշխիքի թողարկման վճարը գանձվում է թողարկման պահին և հաշվարկվում է հիմք ընդունելով հետևյալ բանաձևը.

$$A = G * R\% * N$$

**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ
ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

որտեղ՝

- A՝ Բանկային երաշխիքի թողարկման միջնորդավճար
- G՝ Բանկային երաշխիքի գումար
- R%՝ սահմանված եռամսյակային վճարի չափ (0.3% կամ 0.75%)
- N՝ Բանկային երաշխիքի ժամկետում առկա եռամսյակների քանակ (ոչ լրիվ եռամսյակը համարվում է լրիվ եռամսյակ)

Բանկային երաշխիքի թողարկման վճարի հաշվարկի ներկայացուցչական օրինակ

- Բանկային երաշխիքի գումար՝ 10,000,000 ՀՀ դրամ
- Բանկային երաշխիքի ժամկետ՝ 140 օր (2 ոչ լրիվ եռամսյակ)
- Բանկային երաշխիքի ապահովություն՝ դրամական միջոցներ
- Բանկային երաշխիքի թողարկման վճարի չափ՝ 0.3% յուրաքանչյուր եռամսյակի համար

Ամբողջ ժամկետի համար հաշվարկվող թողարկման վճարը կկազմի՝

$$10,000,000 * 0.3\% * 2 = 60,000 \text{ ՀՀ դրամ}$$

Հաճախորդին Բանկային երաշխիքի տրամադրման համար դրական գործոններ կարող են հանդիսանալ՝

- Բանկի և հաճախորդի միջև ձևավորված հարաբերությունների պատմությունը
- Գործարար համբավը
- և այլն

Բանկային երաշխիքի մերժման գործոնները՝

- Հաճախորդի կողմից ներկայացված տվյալները (փաստաթղթերը և այլ տեղեկատվությունը) անարժանահավատ են կամ ոչ ամբողջական:
- Հաճախորդի եկամուտներն անբավարար են պարտավորությունների մարման համար:
- Հաճախորդն ունի վատ վարկային պատմություն, ժամկետանց և/կամ դասակարգված պարտավորություններ (այդ թվում՝ երրորդ անձանց հանդեպ):
- և այլն:

ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔԻ ՏՐԱՄԱՂԻՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Երաշխիքների թողարկում

Միջնորդավճար

**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ
ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

1.1.1 դրամական միջոցների սառեցմամբ**	յուրաքանչյուր եռամսյակի*** համար 0.3% (գանձվում է միանվագ՝ երաշխիքի տրամադրման պահին՝ գործողության ողջ ժամկետի համար), գործողության ողջ ժամկետի համար նվազագույնը՝ 15,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 500,000 ՀՀ դրամ
1.1.2. այլ միջոցների գրավադրմամբ**	յուրաքանչյուր եռամսյակի*** համար 0.75% (գանձվում է միանվագ՝ երաշխիքի տրամադրման պահին՝ գործողության ողջ ժամկետի համար), նվազագույնը՝ 15,000 ՀՀ դրամ գործողության ողջ ժամկետի համար
1.2. Գրավի փոփոխություն	դրամական միջոցների սառեցմամբ թողարկված բանկային երաշխիքների գրավը այլ գրավով փոխարինելու դեպքում իրականացվում է թողարկման միջնորդավճարի գանձում՝ այլ գրավով ապահովված երաշխիքների համար սահմանված և դրամական միջոցների սառեցմամբ երաշխիքի թողարկման համար գանձված միջնորդավճարի տարբերության չափով
1.3. Երաշխիքի պայմանների փոփոխություն	35,000 ՀՀ դրամ, իսկ երաշխիքի գումարի ավելացման կամ գործողության ժամկետի երկարաձգման դեպքում ավելացված մասով կգանձվի նաև երաշխիքի թողարկման միջնորդավճար
1.4. Երաշխիքի դադարեցում՝ հաճախորդի հրահանգով	25,000 ՀՀ դրամ
1.5. Վճարում պահանջի դիմաց	վճարվող գումարի 0.5%-ը, նվազագույնը՝ 50,000 ՀՀ դրամ
1.6. Անուղղակի երաշխիքներ/միջնորդ բանկի մասնակցությամբ թողարկված/	ըստ պայմանավորվածության
Այլ բանկերի միջնորդավճարները (բացառությամբ՝ հաստատման), փոստային/կապի ծախսերը գանձվում են ըստ դրանց փաստացի մեծության * սույն սակագները կիրառելի են նաև Պահուստային Ակրեդիտիվների (Standby LC) համար ** Երաշխիքի վաղաժամկետ դադարեցման դեպքում գանձված միջնորդավճարը վերադարձման ենթակա չէ *** ոչ լրիվ եռամսյակը համարվում է ամբողջ եռամսյակ	

2. Այլ բանկերի կողմից Հաճախորդի օգտին թողարկված Երաշխիքների ապաստարկում

	Միջնորդավճար
2.1. «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից բանկային երաշխիքի տրամադրում այլ բանկի կոնտր-երաշխիքի դիմաց	ըստ պայմանավորվածության
2.2. Երաշխիքի կամ երաշխիքի փոփոխության ծանուցում	20,000 ՀՀ դրամ
2.3. Երաշխիքի ներքո հաճախորդի վճարման պահանջի կազմում	30,000 ՀՀ դրամ

ՈւՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. Երաշխիքի թողարկման միջնորդավճարը կարող է փոփոխվել Բանկի իրավասու մարմնի որոշմամբ: Հաստատված միջնորդավճարի մասին Հաճախորդը տեղեկացվում է որոշման կայացման հաջորդող աշխատանքային օրը. հաշվարկման և վճարման կարգը սահմանվում է պայմանագրով:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ Բանկի կողմից վճարումը կատարվում է միմիայն երաշխիքով սահմանված պայմաններին և կարգավորվող միջազգային կանոններին համապատասխան՝ երաշխիքով սահմանված կարգով ներկայացված փաստաթղթերի հիման վրա՝ անկախ հաճախորդի և գործընկերոջ միջև այդ պահին առկա փոխհարաբերություններից: